ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հուլիսի 2023 թվականի թիվ 165 - Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-ԻՑ 14-Ը ԳԴՀ ՌԵԳԵՆ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ «ՔԱՂԱՔՆԵՐԻ ՑԱՆՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԲԱՂԱԴՐԻՉԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆԱՐԵԿ ՂՈՒՇՉՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի «Օտարերկրյա պետություններ գործուղումների կարգը և գործուղման արդյունքների մասին, գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին և օտարերկրյա պետություններ գործուղումների ու դրանց ծախսերի մասին եռամսյակային ամփոփ հաշվետվությունների օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1087-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1230-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2023 թվականի հունիսի 29-ի թիվ 1101/34034-23 գրությունը և «Քաղաքների ցանց Հարավային Կովկասում» ծրագրի հայաստանյան թիմի ղեկավարի 2023 թվականի մայիսի 15-ի գրություն-հրավերը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանին 2023 թվականի հուլիսի 10-ից 14-ը գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ռեգեն երկրամասային շրջան՝ Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերության «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի «Քաղաքների ցանց Հարավային Կովկասում» բաղադրիչին մասնակցելու նպատակով:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված ծախսերը կատարվելու են Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերության միջոցների հաշվին:

3. Նարեկ Ղուշչյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ռեգեն երկրամասային շրջան գործուղման արդյունքների վերաբերյալ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

04.07.2023

ք. Իջևան
3 հուլիսի 2023թ.